ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№__2630-Ա___ « 03 » հուլիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի
Հ.2249-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 25.06.2025 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2024 թվականի հունիսի 19-ի «Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Գոգոլի փողոց հ.8/1 բնակելի տան և հողամասի նկատմամբ Հովհաննես Բաստաջյանի և Կլարա Բաստաջյանի իրավունքները վերականգնելու, 15.72 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2249-Ա որոշման/ այսուհետ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Գոգոլի փողոց հ.8/1 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման».

2) Որոշման 5-րդ կետում՝ «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ՝ Հ.Մուրադյանին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ